# ՄԱՅՐ ԱԹՈՌԸ ՀՅՈՒՐԸՆԿԱԼԵՑ ԿԵՆՏՐՈՆԱԿԱՆ ԵՎՐՈՊԱՅԻ ՈՒԽՏԱՎՈՐՆԵՐԻՆ՝ ԱՌԱՋՆՈՐԴՈՒԹՅԱՄԲ ՀԱՅՐԱՊԵՏԱԿԱՆ ՊԱՏՎԻՐԱԿ Տ. ՄԵՍՐՈՊ ԱՐՔԵՊԻՍԿՈՊՈՍ ԳՐԻԳՈՐՅԱՆԻ

Հոկտեմբերի 5-ին, Մայր Աթոռ Ս. Էջմիածնի հոբելյանական փարվա հերթական կիրակի օրը, Ս. Էջմիածինը հյուրընկալել էր ավստրիահայ ուխտավորներին: Ն.Ս.Օ.Տ.Տ. Գարեգին Բ Վեհափառի հանդիսապետությամբ Ուխտի Ս. Պատարագ մատուցեց Կենտրոնական Եվրոպայի Հայրապետական Պատվիրակ Տ. Մեսրոպ արքեպս. Գրիգորյանը:

Կենտրոնական Եվրոպայի Հայրապետական Պատվիրակությունն ընդգրկում է Ավստրիայի և Շվեդիայի հոգևոր հովվությունները՝ կազմավորման առաջին, իսկ տարիներից, ավելի քան քսան տարի, առաջնորդ ունենալով Տ. Մեսրոպ արքեպս. Գրիգորյանին: Մայր Տաճարի օծման 1700-ամյա տարեդարձի առիթով Սրբազան Հոր գլխավորությամբ ուխտի էին եկել մի խումբ հավատացյալներ՝ առավելապես Ավստրիայից: Նրանց էին միացել նաև մի շարք ավստրիացիներ:

Ս. Պատարագի ընթացքում բոլոր ուխտավորներին և հյուրերին ողջունեց Ս. Էջմիածնի Միջեկեղեցական հարաբերությունների բաժնի պատասխանատու Տ. Եզնիկ եպս. Պետրոսյանը: Ապա ուխտավորներին իր պատգամն ուղղեց Մեսրոպ Սրբազանը (տե՛ս էջ 46):

Ս. Պատարագից հետո ուխտավորներին ընդունեց Վեհափառ Հայրապետը:

# ՄԱՅՐ ԱԹՈՌԸ ՀՅՈՒՐԸՆԿԱԼԵՑ ՆՈՐ ՆԱԽԻՋԵՎԱՆԻ ԵՎ ՌՈՒՍԱՍՏԱՆԻ ՀԱՅՈՑ ԹԵՄԻ ՈՒԽՏԱՎՈՐՆԵՐԻՆ

Հոկտեմբերի 12-ին Ս. Էջմիածինը հյուրընկալել էր Նոր Նախիջևանի և Ռուսաստանի հայոց թեմի ուխտավորներին: Ն.Ս.Օ.Տ.Տ. Գարեգին Բ Ամենայն Հայոց Կաթողիկոսի հանդիսապետությամբ Ուխտի Ս. Պատարագ մատուցեց թեմի առաջնորդ Գերաշնորհ Տ. Եզրաս եպս. Ներսիսյանը:

Ս. Պատարագի ընթացքում բոլոր ուխտավորներին և հյուրերին ողջունեց Մայր Աթոռի դիվանապետ Տ. Արշակ վրդ. Խաչատրյանը: Ապա ուխտավորներին իր պատգամն ուղղեց Եզրաս Սրբազանը (տե՛ս էջ 49):

Ս. Պատարագին ներկա էին ՀՀ-ում Ռուսաստանի արտակարգ և լիազոր դեսպան Ա. Դրյուկովը, Համաշխարհային հայկական կազմակերպության նախագահ Արա Աբրահամյանը և բազում ուխտավորներ Մոսկվայից, Սանկտ Պետերբուրգից, Վոլգոգրադից, Եկատերինբուրգից, Տվերից, Դոնի Ռոստովից, Պերմից, Մոլդովայից, Մերձբալթյան երկրներից ու Միջին Ասիայից:

Ս. Պատարագից հետո Վեհարանում ուխտավորներին ընդունեց Ամենայն Հայոց Հայրապետը: